ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 18 փետրվարի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Սոֆյա Թորոսյանի
անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Սոֆյա Թորոսյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2015 թվականի փետրվարի 2-ին)՝ խնդրելով.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասը եւ 407-րդ հոդվածի 5-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18, 19 եւ 20-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

Ըստ դիմողի՝ վիճարկվող իրավադրույթները սահմանափակում են իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից հավասարության պայմաններում գործի արդարացի քննության՝ անձի սահմանադրական իրավունքները:

Քննության առարկա անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ դիմողը պահպանել է ՀՀ սահմանադրական դատարան դիմելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին.
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան.
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում.
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում.
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Միաժամանակ հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի ՍԴԱՈ-76 աշխատակարգային որոշմամբ «Քաղաքացի Վալենտինա Մկրտիչյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասի, 407-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի դատաքննությունն սկսելու օր է նշանակվել 2015 թվականի մարտի 17-ը: Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի պահանջներով, գտնում ենք, որ հիշյալ գործին կարող է միավորվել քաղաքացի Ս. Թորոսյանի՝ քննության առարկա դիմումով գործը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Քաղաքացի Սոֆյա Թորոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասի եւ 407-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Առաջարկել քաղաքացի Սոֆյա Թորոսյանի անհատական դիմումով գործը միավորել ՀՀ սահմանադրական դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի ՍԴԱՈ-76 աշխատակարգային որոշմամբ «Քաղաքացի Վալենտինա Մկրտիչյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասի, 407-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործին:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

18 փետրվարի 2015 թվականի
ՍԴԴԿՈ/ 1-7